ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/35 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Վերարկուն կանաչ գույնի կիսաբրդյա կտորից է: Կտորի երանգը համաձայնեցվում է Գնորդի հետ: Կտորի բաղադրությունը՝ 44% բուրդ, 54% պոլիէստեր, 2% լայկրա, կտորի խտությունը՝ 235 գրամ մ2, թույլատրելի շեղումը համաձայն ԳՈՍՏ-ի: Վերարկուն կազմված է լանջափեշերից, թիկնամասից, թևքերից և կարակուլե բնական մորթուց հանովի օձիքից: Վերարկուի առաջամասը, թիկունքը և թևերն ամբողջությամբ մշակվում են սինթեպոնով, որը մգդակված է աստառի հետ շեղանկյուն (փախլավաձև) հյուսքով: Վերարկուն կոճկվում է կափույրով ծածկվող շղթայով: Լանջափեշերի վրա՝ վերևից ուղղահայաց վրադիր գրպաններ: Գրպանների կափույրները կոճկվում են կպչունակներով: Կողային գրպանները՝ շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Օձիքը՝ ծալովի: Ուսադիրների շրջանում՝ կպչունակով ամրակներ: Առջևի ձախ գրպանի վերևի մասում ասեղնագործվում են «ՔԿԾ» տառերը՝ քրեակատարողական ծառայության պետի տեղակալների համազգեստին՝ աջ գրպանի վերևի մասում՝ վերջինիս անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը: Վերարկուի հետ տրվում են նաև ուսադիրները: Հանովի ուսադիրներն ուղղանկյուն են, զուգահեռ կողմերով, երկարությունը 90 մմ է, լայնությունը՝ 50 մմ, ստորին և վերին եզրերը 2,5 մմ լայնությամբ մուգ կանաչ գույնի ասեղնագործված: ՈՒսադիրները ստորին հատվածում ասեղնագործվում են երկու ոսկեգույն 4 մմ լայնությամբ մակաշերտեր: Ուսադիրները պատրաստվում են վերարկուի կտորից: Տեխնիկական բնութագրի ընդհանուր պայմանները և հանդերձանքի նկարները ներկայացված են կից՝ հավելված 1-ում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/35 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	